ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով անցկացվող մրցույթի կազմակերպման և մրցույթի արդյունքների գնահատման մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով)՝

մասնակցությամբ մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Հարութ Ակլունցի, անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Լյուդվիկ Դավթյանի,

նկատի ունենալով հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու համար անցկացված մրցույթների գրավոր փուլի ամփոփման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով գրավոր փուլի արդյունքներն ըստ ծածկագրերի ստուգել ու հանգամանքը, ինչպես նաև ծածկագրերի և անվան, ազգանվան նշումով աշխատանքների՝ կնքված արկղերում տեղադրված լինելու հանգամանքը,

ղեկավարվելով Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**) 3.6-րդ կետով, 3.11-րդ կետի 4-րդ ենթակետով, 4.7 կետով, միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Գնահատել քաղաքացիական ուղղվածության վերաքննիչ բողոք կազմելու գրավոր առաջադրանք կատարված աշխատանքները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Գնահատել քրեական ուղղվածության դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմելու գրավոր առաջադրանք կատարված աշխատանքները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Տեղադրել սույն որոշման հավելվածները Պալատի կայքում և փակցնել՝ Պալատում ցուցատախտակի վրա:

02 դեկտեմբերի 2021թ.
թիվ 1/3-Ա

4. 2021 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը՝ 14:00-ին Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ) բացել կնքված արկղը և հանել ծածկագրերի և անվան, ազգանվան նշումով աշխատանքները:
5. Սույն որոշման 4-րդ կետի մասին իրազեկել հավակնորդներին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝

Հարութ Ակլունց

Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝

Նոննա Համբարձումյան

02 դեկտեմբերի 2021թ.
թիվ 1/3-Ա
ք. Երևան